



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8680 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել է 16.7%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ՝ 7.7 %-ով:

2004թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3627 օտարման գործարքների 89.3%-ը կազմել են առուվաճառքները, 9.8 %-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 44.3%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հոկտեմբերին, 2003թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 10.1%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ՝ 11.4%-ով: 2004թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի 1322 առուվաճառքի գործարքների 67.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.9%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 8.4%-ով:

2004թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. հոկտեմբերին համարժեք է 506.4 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հոկտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2004թ.	սեպտեմբեր 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	402.1	488.5	479.5
Արաբկիր	250.0-560.0	302.8	390.1	377.2
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	193.1	236.7	231.4
Նոր-Նորք	115.0-250.0	150.6	207.5	199.8
Ավան	120.0-230.0	150.1	200.4	192.7
Էրեբունի	120.0-300.0	159.5	192.5	186.5
Շենգավիթ	120.0-270.0	162.4	227.5	222.5
Դավթաշեն	130.0-320.0	191.7	244.8	238.2
Աջափնյակ	120.0-300.0	167.5	224.7	217.8
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	157.5	223.0	218.5
Նուբարաշեն	65.0-120.0	70.1	90.7	83.5
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	191.6	247.9	240.7

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հոկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 3.0%:

2004թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 484 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել է 6.1%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ՝ 9.8%-ով:

2004թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հոկտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2004թ.	սեպտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.7	71.8	67.5
	Ապարան	18.0-50.0	27.4	38.0	37.8
	Թալին	18.0-40.0	25.2	31.9	31.8
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.7	59.5	56.5
	Մասիս	20.0-90.0	54.4	63.2	63.0
	Վեդի	20.0-60.0	31.7	42.7	42.6
	Արարատ	22.0-50.0	31.5	42.0	41.0
Արմավիր	Վաղարշապատ	35.0-110.0	84.6	106.8	101.6
	Արմավիր	21.0-80.0	45.6	65.6	64.5
	Մեծամոր	17.0-50.0	30.9	32.7	32.6
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.7	34.8	34.8
	Գավառ	20.0-50.0	30.4	33.6	33.6
	Մարտունի	18.0-60.0	29.7	36.6	36.6
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.6
	Ճամբարակ	13.0-30.0	16.9	17.9	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	61.0	63.8	62.5
	Ստեփանավան	20.0-48.0	33.3	36.9	36.6
	Մայիսակ	17.0-50.0	24.1	41.5	40.8
	Ալավերդի	15.0-40.0	25.6	26.5	26.5
	Տաշիր	15.0-40.0	19.4	25.5	25.5
Կոտայք	Արուսյան	40.0-150.0	84.1	108.8	100.5
	Նոր Հաճն	35.0-100.0	52.3	75.5	70.5
	Բյուրեղավան	15.0-60.0	35.2	49.2	48.8
	Եղվարդ	28.0-65.0	40.7	53.5	50.5
	Հրազդան	18.0-65.0	30.9	45.8	42.7
	Ծաղկաձոր	22.0-100.0	75.8	90.1	88.7
	Չարենցավան	13.0-55.0	31.1	42.0	41.5
Շիրակ	Գյումրի	30.0-110.0	71.8	77.5	76.2
	Արթիկ	17.0-45.0	25.3	31.4	31.4
	Մարալիկ	15.0-33.0	23.7	28.4	28.4
Սյունիք	Գորիս	21.0-50.0	29.7	38.0	37.5
	Կապան	18.0-52.0	29.3	33.9	33.8
	Սիսիան	17.0-48.0	27.6	35.7	35.7
	Մեղրի	18.0-58.0	25.2	25.7	25.5
	Ագարակ	18.0-50.0	23.5	25.2	25.2
	Քաջարան	13.0-30.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	40.4	39.2
	Եղեգնաձոր	20.0-60.0	46.9	53.8	50.2
	Ջերմուկ	18.0-90.0	41.2	59.5	55.6
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	44.8	43.5
	Իջևան	23.0-80.0	40.4	56.6	53.0
	Բերդ	15.0-43.0	29.3	35.7	33.5
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7

2004թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի միջին գների ամսեկան աճը կազմել է 3.0%:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 433 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 101, մյուս մարզերում միասին վերցրած՝ 332: 2004թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 2.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 8.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 6.1%-ով: 2003թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.5%-ով, ընդ որում՝ Երևանում աճել է 3.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 9.0%-ով:

2004թ. հոկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հոկտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2004թ.	սեպտեմբեր 2004թ.
Գենտրոն	255.0-1000.0	416.2	493.5	480.0
Արաբկիր	205.0-900.0	306.7	396.5	384.8
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	194.8	238.3	231.9
Նորք-Մարաշ	120.0-550.0	309.2	346.8	340.2
Ավան	125.0-280.0	150.9	202.4	193.5
Էրեբունի	130.0-320.0	160.4	195.4	187.6
Շենգավիթ	120.0-350.0	162.4	230.5	223.6
Դավթաշեն	140.0-700.0	192.5	249.9	239.1
Աջափնյակ	125.0-320.0	168.3	227.2	218.8
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	157.4	225.1	219.8
Նուբարաշեն	65.0-150.0	73.1	91.5	83.8
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-1000.0	208.4	263.4	254.8

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, ամսեկան աճը կազմել է 3.4%:

2004թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հոկտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2004թ.	սեպտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.8	87.1	86.7
	Ապարան	25.0-60.0	38.8	39.3	39.0
	Թալին	20.0-65.0	28.1	35.2	34.8
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	62.2	62.1
	Մասիս	50.0-90.0	62.4	64.7	63.6
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	49.4
	Արարատ	20.0-65.0	37.4	45.9	44.7
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.6	107.8	105.6
	Արմավիր	35.0-90.0	52.3	66.3	65.2
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	42.3	41.2
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	41.1	40.9
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.7	21.3
	Ճամբարակ	15.0-50.0	19.5	22.4	20.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.7	70.7	70.1
	Ստեփանավան	15.0-60.0	33.7	48.3	43.1
	Սպիտակ	20.0-60.0	24.1	47.7	42.9
	Այվերդի	15.0-50.0	25.9	28.9	27.8
	Տաշիր	15.0-55.0	19.9	27.6	26.3
Կոտայք	Աբովյան	70.0-120.0	92.4	109.7	101.6
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	76.1	72.2
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	50.7	49.0
	Եղվարդ	40.0-80.0	47.3	54.3	52.2
	Հրազդան	25.0-65.0	40.0	46.0	44.9
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.2	97.5	96.1
	Չարենցավան	25.0-65.0	33.4	42.8	42.1
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.9	91.8	91.6
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.5	33.2
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.7	29.5
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.6	39.5	38.4
	Կապան	20.0-60.0	31.1	36.4	35.5
	Սիսիան	20.0-60.0	28.7	37.4	36.6
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.7	28.2
	Ազարակ	15.0-50.0	25.9	28.3	28.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	41.5	39.5
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.2	54.7	50.3
	Ջերմուկ	25.0-65.0	43.3	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	55.9	50.6
	Իջևան	35.0-80.0	41.2	57.7	54.8
	Բերդ	20.0-60.0	30.9	36.0	33.6
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.0

2004թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, ամսեկան աճը կազմել է 3.2%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1140.08 հա /այդ թվում 19.35 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1082.93 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1113.87 հա հողերի /այդ թվում՝ 19.34 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1058.53 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 5 միավոր /1.62 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 2-ը՝ /0.86 հա/ Երևանում:

Օտարված 14.04 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 12.29 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Փոխանակման միջոցով օտարվել են 12.17 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 0.01 հա Երևանում/, որից 12.11 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 734.15 հա, որից 731.88 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հոկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն վարձակալության իրավունքի վաճառքի և արդյունաբերական օբյեկտների հողերը:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	48	3.78	16	7.61	0	0.00	53	4.17	28	2.89
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	39	26.42	26	2.92	4	0.82
Արարատ	39	94.40	102	10.12	1	1.70	61	23.97	49	3.93	0	0.00
Արմավիր	7	489.40	0	0.00	0	0.00	144	242.48	26	2.27	0	0.00
Գեղարքունիք	1	0.13	0	0.00	0	0.00	8	9.44	4	0.48	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	4	1.77	2	0.19	1	0.01
Կոտայք	49	84.91	0	0.00	0	0.00	127	50.77	129	11.93	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	16	12.48	8	0.51	3	0.16
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	15	19.32	0	0.0	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04	2	0.02
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	7	3.06	2	0.14	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>96</b>	<b>668.84</b>	<b>150</b>	<b>13.90</b>	<b>17</b>	<b>9.31</b>	<b>421</b>	<b>389.71</b>	<b>300</b>	<b>26.58</b>	<b>38</b>	<b>3.90</b>

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 1029 առուվաճառքի գործարքներ /2003թ հոկտեմբերին՝ 665 /, այդ թվում 517-ը՝ գյուղատնտեսական նշանակության /372/, 507-ը՝ բնակավայրերի /291/, 5-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ /2/:

2004թ. հոկտեմբերին հողերի առուվաճառքներից 247-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2003թ հոկտեմբերին՝ 60/, այդ թվում 49-ը՝ /4.51 հա/ Երևանում /23/, իսկ 198-ը՝ /680.53 հա/ մյուս մարզերում /37/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 95-ը միավորը /668.71 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2003թ հոկտեմբերին՝ 16/, 145-ը՝ /13.54 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /33/, 7-ը՝ /2.80 հա/ հասարակական կառուցապատման հողեր /11/:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի 517 առուվաճառքների գործարքները 95-ն իրականացվել են աճուրդների և 1-ը՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքի տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						28	9.71	800.0	10000.0	3000.0
Ապարան						6	2.93	200.0	1700.0	610.0
Թալին						1	5.33	200.0	1680.0	470.0
Ծաղկահովիտ						4	8.45	170.0	2100.0	265.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	9	23.73	160.0	1735.0	490.0	21	5.87	740.0	12000.0	2100.0
Մասիս	6	41.37	55.0	600.0	270.0	13	3.22	400.0	8800.0	1680.0
Վեդի	24	29.30	120.0	2355.0	1285.0	27	14.88	450.0	7200.0	1340.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						61	145.40	650.0	4650.0	1340.0
Բաղրամյան	6	488.80	50.0	230.0	135.0	23	33.27	200.0	1500.0	540.0
Վաղարշապատ	1	0.60	50.0	50.0	50.0	60	63.80	980.0	14000.0	2140.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	0.10	420.0	1100.0	630.0
Ճամբարակ						5	2.95	100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						2	6.39	60.0	1180.0	270.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						2	0.57	360.0	5500.0	930.0
Գուգարք								500.0	6000.0	1780.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						2	1.20	180.0	4000.0	460.0
Տաշիր								100.0	400.0	250.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	7	14.00	84.0	86.0	85.0	99	32.32	600.0	20000.0	4950.0
Եղվարդ	8	41.60	110.0	1600.0	605.0	24	16.63	380.0	10000.0	3370.0
Հրազդան	34	29.31	20.0	730.0	270.0	4	1.83	250.0	6000.0	960.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						10	5.80	550.0	2500.0	720.0
Ամասիա						1	2.45	80.0	525.0	180.0
Անի						2	1.64	240.0	800.0	290.0
Աշոցք								60.0	210.0	150.0
Արթիկ						3	2.59	140.0	800.0	290.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								200.0	1600.0	500.0
Կապան								120.0	2000.0	330.0

Մեղրի								400.0	4240.0	850.0
Սիսիան						15	19.32	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								260.0	4000.0	2250.0
Վայք								120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										
Բերդ						4	1.61	100.0	2000.0	660.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						3	1.45	100.0	8340.0	650.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 349 առուվաճառքի գործարքներ, որից 102-ը աճուրդային վաճառքներ և 1-ը՝ դատարանի վճռով գործարք:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքի տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						24	22570.0	250.0	8000.0	3100.0
Ապարան						2	6660.0	250.0	1400.0	340.0
Թալին								100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	42	42172.0	140.0	505.0	390.0	7	8185.0	300.0	6000.0	1000.0
Մասիս	18	16210.0	255.0	435.0	340.0	32	21600.0	300.0	20000.0	1250.0
Վեդի	42	42840.0	95.0	510.0	495.0	10	9520.0	250.0	2200.0	740.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	10112.0	300.0	5000.0	1150.0
Բաղրամյան								180.0	600.0	210.0
Վաղարշապատ						16	12583.0	300.0	10000.0	1760.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	339.0	300.0	2000.0	600.0
Ճամբարակ						1	1530.0	100.0	300.0	160.0
Մարտունի						1	1200.0	200.0	600.0	250.0
Սևան						1	1700.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք								150.0	5200.0	820.0
Սպիտակ						1	480.0	140.0	900.0	180.0
Ստեփանավան						1	1420.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						62	50830.0	300.0	10000.0	2150.0
Եղվարդ						60	59984.0	300.0	10000.0	2480.0
Հրազդան						6	7652.0	300.0	8000.0	1550.0
Շիրակի մարզ										



Ախտորյան						4	2255.0	250.0	3400.0	440.0
Ամապիա								100.0	300.0	135.0
Անի						1	1630.0	150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ						3	1200.0	150.0	900.0	210.0
Սյունիքի մարզ										
Գորիս								150.0	1200.0	400.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	400.0	150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						2	1392.0	150.0	2200.0	610.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 11 գործարքներ 2.30 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ Արարատի /1.12 հա/ և 3-ը՝ Տավուշի /1.19 հա/ մարզերում:

2004թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 673 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 2.7%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել՝ 11.1%-ով:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 70 բնակարանների, 22 անհատական բնակելի տների, 174 հասարակական, 27 արտադրական նշանակության օբյեկտների, 379 միավոր հողերի և 1 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2004թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 59 վարձակալության գործարքների քանակները 2004թ. սեպտեմբերի համեմատ նվազել են 32.7 %-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել են 28.3 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 1417.08 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 7.10 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1322.86 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 24.28 հա նախկին պահուստային/, 5.19 հա բնակավայրերի, 26.80 հա արդյունաբերական օբյեկտների, 25.50 հա հատուկ պահպանվող տարածքների, 29.60 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 0.03 հա էներգետիկայի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 307.84 հա, որից 294.60 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 96.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	16	183.93
Արարատ	0	0.00	34	294.60
Արմավիր	0	0.00	1	4.0
Գեղարքունիք	0	0.00	18	273.95
Լոռի	0	0.00	31	33.44
Կոտայք	0	0.00	36	60.77
Շիրակ	1	10.00	23	179.79
Սյունիք	5	86.00	13	100.67
Վայոց Ձոր	0	0.00	11	95.72
Տավուշ	0	0.00	0	0.0
<b>Ընդամենը</b>	<b>6</b>	<b>96</b>	<b>183</b>	<b>1226.87</b>

2004թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 737 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել է 40.1%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ՝ 27.7%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 31.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.8%/, առանձնատների /14.9%/ և հողերի /25.8%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 334 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 11.0%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ՝ 45.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 358.08 հա /այդ թվում 5.61 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 350.44 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 280.44 հա, բոլորն էլ գյուղատնտեսական նշանակության:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 10 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2003թ. հոկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 68.2% -ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Շիրակի մարզում՝ 28.6%:

2004թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1554 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել է 49.4%-ով, իսկ 2004թ. սեպտեմբերի համեմատ՝ 13.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /49.3%/:

**ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**

